Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ. հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Հեմիաթաթերապիա
Ուսուցչի տվյալներ ● Անուն, ազգանուն, հայրանուն ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	● Անահիտ Պողոսյան Շավարշի ● Դասվար ● +37493577163 ● apogosyan233@gmail.com ● Մայրենի Մաթեմատիկա Կերպարվեստ Ֆիզկուլտուրա Երաժշտություն Տեխնոլոգիա 3-րդ

Ուսումնական հաստատության տվյալներ	
• Անվանումը, հասցե • Հեռախոս • էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	• Վանաձորի Գևորգ Չաուշի անվ. N24 միջնակարգ դպրոց • +37448396 • vanadzor24@schools.am

Բովանդակություն

Ներածություն - 3 3
Հիմնական բովանդակություն -5 4
Եզրակացություններ, առաջարկություններ - 15 5
Օգտագործված գրականության ցանկ -17 6
Հավելվածներ - 18 7

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Հեքիաթաթերապիան օգտագործելով՝ նկարագրել և փորձել շտկել վարքային որոշակի շեղումներ դպրոցական տարիքի երեխաների մոտ: Արդյո՞ք հեքիաթաթերապիայի միջոցով կարելի է իրականացնել վարքային շտկումներ տարրական դասարաններում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	• Սովորել սովորելու • Լեզվական • Ինքնահանգիստ
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Սովորողներ –27 Աղջիկ – 11 Տղա– 16
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	• Քառաբաժան • Հարցաթերթ • Դիտում • Մտագրոհ

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	11.09- 18.09

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:	Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են: Դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում: Տարրական դասարանների «Մայրենի»-ի դասագրքերում տեղ գտած հեքիաթների հիմքը նույնպես մարդկային կյանքն է՝ իր բարդ ու բազմապիսի փոխհարաբերություններով: Տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարաններում զետեղված են հեքիաթներ ընկերասիրության, հավատարմության, աշխատանքի ու աշխատասիրության, ազահության, խորամանկության վերաբերյալ: Երեխաները պետք է իմանան, որ ժողովրդական հեքիաթների լավագույն մշակումներ են կատարել Ղազարոս Աղայանը, Թումանյանը, Ստեփան Զորյանը, Մկրտիչ Կորյունը և ուրիշներ: Հեքիաթը ծագել է մարդ արարածի բառ ոը բանի, նրա աշխարհայացքի, մտքի ու երևակայության, ձգտումների ու երազանքների ձևավորման պահից: Այն ժողովուրդը, որը հեքիաթ է ստեղծում՝ անմահ է: Դարեր շարունակ տատիկները հեքիաթների միջոցով փոքրիկներին ներարկել են սեր բնության, մարդու, հայրենիքի, կենդանիների, թռչունների նկատմամբ, որտեղ էլ արտացոլվել են մարդկանց առօրյան, կենցաղն ու աշխատանքը: Հեքիաթները դրվատում են բարին ու խարազանում չարը: Դրանք ընդգծում են լույսի ու գիտության կարևորությունը, որևէ արհեստի տիրապետելու անհրաժեշտությունը, փառաբանում են խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը, գովաբանում մարդկային նկարագրի լավագույն ու ընդօրինակելի գծերը: Հեքիաթները լինում են տարատեսակ՝ իրապատում, հրաշապատում, կենդանական: Հեքիաթները հիմնականում լինում են արձակ, պատահում են նաև չափածո: Հեքիաթում հերոսները և դեպքերը պատկերված

են չափազանցված, այլաբանորեն կամ հրաշապատման ձևերով: Հեքիաթներում հաճախ հանդիպում են կախարդանք կամ մոգություն: Դրանցում լինում են այնպիսի կերպարներ, ինչպիսին են՝ թզուկները, էլֆերը, փերիները, հսկաները կամ վհուկները: Հեքիաթերին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունները, իմաստալից խոսքերը: Հաճախ էլ իրար են խառնված իրականն ու երևակայականը:

Հեքիաթի մեծ մասը սկսվում է ՝ «Լինում է, չի լինում», «Կար չկար», «Ժուկով ժամանակով», «Ժամանակով», «Զգիտեմ, որ երկրում, որ թագավորության մեջ» արտահայտություններով:

Իսկ ավարտվում են՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասեք ձեր մուրազին» վերջաբանով:

Հեքիաթների հեղինակը ժողովուրդն է: Գրողները մշակել են ժողովրդական հեքիաթները: Ոմանք էլ ինքնուրույն հեքիաթներ են գրում:

Հեքիաթները բաժանվում են երեք մեծ խմբի՝ հրաշապատում կամ կախարդական, կենդանական և իրապատում: Հրաշապատում հեքիաթներում պատկերվում են բարի ուժերը մարմնավորող հերոսների պայքարը չար ուժերի դեմ:Չար ուժեր են դևերը, կախարդները, վհուկները, վիշապները: Դեպքերը տեղի են ունենում ստորգետնյա թագավորությունում, այլ աշխարհներում, անհավատալի դառնում է իրական: Հեքիաթի հերոսին օգնում են ձին, թռչունը, բարի պառավը, իմաստուն ծերունին:

Բոլոր հեքիաթների մեջ չարի ու բարու պայքար կա և այդ պայքարը միշտ ավարտվում է բարի ուժերի հաղթանակով:

Հեքիաթաթերապիան արտերապիայի ուղղություններից մեկն է, որն աշխատում է ենթագիտակցական մակարդակում գտնվող խորհրդանիշների միջոցով: Այսինքն՝ հեքիաթի հերոսները, կենդանիները, ծառերը և բնության այլ երևույթներ հանդիսանում են խորհրդանիշներ, որոնց հետ անձն անցնում է ճանապարհ՝ վերջիններիս իրեն նմանեցնելով կամ

նմանակելով: Այս դեպքում անձն ավելի հեշտությամբ է կարողանում խոսել, արտահայտվել, ավելի հեշտ է կարողանում կառուցել մտքեր, կարծիքներ, ծրագրավորել գործողություններ, քանի որ այն կատարում է հեքիաթի հերոսների անունից:

Թերապևտիկ հեքիաթները սովորաբար ունենում են հստակ կառուցվածք՝ սկիզբ, որի ընթացքում որոշվում է հեքիաթի ընդհանուր բնույթը , գագաթնակետ, որի ընթացքում տեղի են ունենում հիմնական խնդիրների հետ բախումները , և ավարտ, որը պարտադիր պետք է դրական լինի :

Հեքիաթաթերապիան միայն հեքիաթի ընթեցանությունը չէ, այլ նաև հեքիաթի ստեղծագործումը, փոփոխումը, շարունակումը, բեմադրումը և այլն: Երեխայի խնդրից կախված՝ կիրառում ենք տարբեր տեսակներ:

Եթե երեխան հաշմանդամություն ունի, այս դեպքում հեքիաթաթերապիան որոշակի առանձնահատուկ փոփոխություն չի կրում: Միայն մտավոր խնդիրների դեպքում աշխատում են ընտրելով ավելի պարզ հեքիաթներ:

Հեքիաթաթերապիան խորհուրդ չի տրվում կիրառել միայն այն դեպքում, երբ կա իրականության հետ կապի կորստի խնդիր: Օրինակ՝ շիզոֆրենիայի դեպքում այն կարող է ավելի սրել այդ իրավիճակը:

Այսպիսով, եթե, երեխան ունի օրինակ՝ վախի խնդիր, գիշերը չի կարողանում քնել, քանի որ վախենում է, որ սենյակում կարող է լինել որևէ կենդանի, օրինակ՝ ոգնի, որը կարող է ծակել իրեն, ապա այդ դեպքում ծնողը կարող է առաջարկել մի հեքիաթ, որը կօգնի հաղթահարելու այդ վախը:

Օրինակ՝ եթե երեխայի սիրած կենդանին արջուկն է , առաջարկում են մի իրավիճակ, որտեղ գլխավոր հերոսը արջուկն է, այսինքն իրավիճակը առավելագույնս մոտեցնում են իրականությանը: Եթե երեխան մեծ եղբայր ունի, ապա արջուկը նույնպես պետք է ունենա մեծ եղբայր, հայր ու մայր, այն կարևոր անձինք , որոնք առկա են երեխայի կյանքում: Կարող են այնպես ձևակերպել, որ արջուկն ընկերանա ոգնու հետ, որ ոգնին

	ևս կարող է վախենալ և այդման էլ չի տարբերվում արջուկից: Նրանք կարող են գիշերով միասին որոշակի ճանապարհ անցնել, խաղալ, նայել լուսնին, աստղերին, դիմավորել արևածագը: Այսինքն՝ երեխան ընկերանալով իր վախի հետ, փորձում է այն հաղթահարել: Սակայն դրական կողմերը նշելով հանդերձ՝ չպետք է մոռանալ բացասականի մասին, որ ոգնին կարող է ծակել , պահպանում ենք ամբողջականության սկզբունքը: Սա անհրաժեշտ է, որպեսզի երբ երեխան իրականում շփվի ոգնու հետ, այն կարող է իրականում երեխային վնասել կամ հարցնել, թե ինչու՞ էին իրեն ստել: Հեքիաթների միջոցով հնարավոր է հասկանալ երեխայի դիրքորոշումը տարբեր հարցերի շուրջ, նրա արժեհամակարգը, վախերը, անհանգստությունները, դրդապատճառները և այլն: Կարող են երեխային ուղղորդել, բացատրել, թե ինչու կարող են լինել այս կամ այն դեպքում: Այս ուղղությունը կիրառելի է թե՛ երեխաների, թե՛ մեծահասակների համար: Հեքիաթաթերապիան օգնում է հոգեբանին հաճելի շփում հաստատել այցելուի հետ, հաղթահարել նրա հոգեբանական դիմադրությունը և աշխատել նրա այնպիսի խնդիրների հետ, որոնք նա այս կամ այն պատճառով դեռ պատրաստ չէ քննարկել: Հեքիաթաթերապիան այցելուին հնարավորություն է տալիս հասկանալ և ընդունել սեփական անձն ու շրջապատող աշխարհն այնպես, ինչպիսին կա, բարձրացնել ինքնագնահատականը և փոխվել ցանկալի ուղղությամբ: Ծնողները հավանաբար գիտեն՝ ինչ հեքիաթներ են դուր գալիս իրենց երեխաներին: Դա նշանակում է, որ նա ենթագիտակցաբար արդեն ընտրել է հեքիաթի իր սիրելի հերոսին և փորձում է նմանակել նրան: Փորձեք հեքիաթ հորինել Ձեր երեխայի հետ միասին, և Դուք կբացահայտեք նրա գաղտնի մտքերն ու ցանկությունները: Կյանքը հեքիաթ է, հեքիաթը կյանքն է: Այն պետք է արտացոլի իրական կյանքը և երեխայի հուզական

աշխարհի վրա ճիշտ ներգործի, նշան պատրաստելով կյանքի դժվարություններին:
Հովհաննես Թումանյանն ասել է. « Հեքիաթներում անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ: Հեքիաթները հարուստ և շքեղ աշխարհ են: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործություններն են, նույնիսկ հանճարները հեքիաթներ չեն կարողանում ստեղծել, բայց ձգտում են հեքիաթի»:
Հեքիաթի միջոցով հետաքրքրություն առաջացնել երեխաների շրջանում դժվար է: Շատ երեխաներ հեքիաթ չեն սիրում, պետք է այնպես անել, որ երեխան մտնի դրա մեջ, ինքն էլ մասնակցություն ունենա, վերարտադրի իր ձևով, բեմականացնի, որ իր համար հետաքրքիր լինի:
Հեքիաթը կարդալուց հետո պետք է երեխաներին թույլ տա, որ իրենք քննարկեն, վերլուծեն և ինչու ոչ՝ բանավիճեն հերոսների լավ ու վատ լինելու շուրջ:
Կան երեխաներ, ովքեր լուռ լսում են հեքիաթը, ովքեր հարցեր են տալիս ու ակնկալում մեծից պարզ ու հասկանալի բացատրություն:
Էնշտեյնն ասել է. « Եթե ուզում եք, որ ձեր երեխան խելացի լինի, հեքիաթներ կարդացեք նրանց համար»:
Վերջին ժամանակներում հոգեբանները հաճախ են կիրառում թերապետիկ հեքիաթները, որոնք հիշեցնում են հայտնի հեղինակների հեքիաթները:
Պետք է երեխաներից չխլենք հեքիաթները, քանի դա նրանց պատկերացումների դրախտն է ու չպետք է աղավաղենք:
Ժամանակակից երեխային բավարար չէ պարզապես հեքիաթ կարդալ, զրուցել բովանդակության և նրա հերոսների մասին, այլև անհրաժեշտ է նրան սովորեցնել բացահայտել հեքիաթում թաքնված իմաստները և կյանքի դասերը: Լսելով այդ ամենը՝ երեխան աստիճանաբար գիտելիքներ կկուտակի այս աշխարհի վերաբերյալ, ձեռք կբերի կարևորագույն բարոյական արժեքներ:
Հատկանշական է, որ այն երեխաները, որոնց համար հեքիաթ են կարդում, ոչ միայն ավելի արագ են սկսում խոսել, այլև կազմում են նախադասություններ սահուն, գրական լեզվով: Եվ վերջապես հեքիաթների միջոցով

	զարգանում է սովորողների մոտ երևույթները ճիշտ ընկալելու և իրենց վերաբերմունքն արտահայտելու կարողություն, խոսքն օգտագործել որպես մտածողության ակտիվացման միջոց, ձևավորվում է երեխայի աշխարհայացքը, ճաշակը, մտքի չափանիշները:
Հետազոտության ընթացքը	Կրտսեր դպրոցականի մոտ շատ կարևոր դեր է կատարում հեքիաթը: Ժամանակակից կրթական համակարգի նպատակներից մեկն է՝ երեխային տալ այնպիսի կրթություն, որը նրան հնարավորություն կտա ոչ միայն լսել, այլ ձեռք բերել ինքնուրույն մտածելու և գործելու կարողություններ և հմտություններ, անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն կընձեռնի և այդ կարողությունը, և հմտությունը կկիրառի կյանքում: Կրտսեր դպրոցականները ուզում են հավատալ «կախարդական գավազանի» գոյությանը, թռչող ձիերի, ցախավելի, գորգի հզորությանը: Նրանք հիանում են հեքիաթի բարի հերոսների հաղթանակով, հնարամտությամբ և ձգտում նմանվել նրանց՝ լինել բարի, կամեցող, ապրամակցող, արդար ու ազնիվ: Սա է հեքիաթի ուժը: Ուսուցիչն իր աշխատանքի մեջ պիտի լինի վստահ՝ հասա՞վ արդյոք իր նպատակին, փայլեցին երեխաների աչքերը, հարստացավ նրանց հոգեկան աշխարհը: Հեքիաթը կարելի է բեմադրել, սակայն դրանից առաջ պետք է կատարել վերլուծություն, քննարկել: Ուսուցչի վառ ու տպավորիչ խոսքը կնպաստի երեխաների լեզվի ու ոճի հմայքը: Օգտակար է նաև հեքիաթի շարունակությունը հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայություն թռիչքին: Մենք ընտրեցինք «Հեքիաթ արևի մասին» հեքիաթը: Ի՞նչու ընտրեցիք հատկապես այս հեքիաթը: Կա՞ն անծանոթ բառեր, բառակապակցություններ այս հեքիաթում:

Միասին սահմանում ենք այն ժամանակահատված, որն անհրաժեշտ է աշակերտներին հեքիաթն ընթերցելու համար:

Աշակերտները անպայման պետք է իմանան ընթերցանությանը հատկացվող ժամանակը, որպեսզի ըստ այդմ կարողանան պլանները կազմել: Ընթերցման ժամանակ ուշադրություն դարձնել մանրամասների վրա: Աշակերտն իր առջև որոշակի նպատակ կամ խնդիր է դնում նախքան կարդալը, ապա նա ընթերցման ժամանակ վերահսկում է իր սեփական ընկալումը: Երբ գիտակցում է, որ իրադարձությունների իմաստը լավ չհասկացավ կամ կորցրեց հեքիաթի «թելը» , ձեռնարկում է ճշգրտման քայլեր՝ վերընթերցում, բառի իմաստը փնտրում է բառարանում:

Այս բոլորից հետո նրանց ուղղվեց հետևյալ հարցերը

- Ինչը՞ ձեզ դուր եկավ այս հեքիաթում:
- Ինչը՞ դուր չեկավ:
- Ինչպե՞ս էր հեքիաթը սկսվում:
- Ինչպե՞ս ավարտվեց:
- Արդյո՞ք ընդունելի ավարտ էր:
- Ի՞նչն էր կարևոր:
- Հեքիաթն ընթերցելուց հետո ի՞նչ մտքեր են ծագել:
- Ի՞նչն էր կարևոր:
- Եթե դուք լինեիք Արեգը, ի՞նչ կերպ կանեիք:
- Արևներից ո՞վ ավելի շատ ձեզ դուր եկավ:
- Ի՞նչ հասկացաք այս հեքիաթից:

Այնուհետև այս հինգ աշակերտներին առաջադրվեց հետևյալ հարցերը.

- Ո՞վ է ասում:
- Ի՞նչ է ասում:
- Ու՞մ է ասում:
- Ինչու՞ է ասում:
- Ինչպե՞ս է ասում:

Այնուհետև երեխաներին տրվեց հեքիաթի յուրաքանչյուր դրվագին համապատասխանող առանձին

նախադասություններ, որոնք պետք է դասավորեն ճիշտ և տրամաբանական հերթականությամբ: Առաջարկվեց կազմել հեքիաթի կառուցվածքի բուրգ հետևյալ ձևով.

1. Հեքիաթի հերոսները:
2. Գործող անձը:
3. Ո՞ւրտեղ է գտնվում:
4. Առաջին դրվագը:
5. Երկրորդ դրվագը:
6. Երրորդ դրվագը:
7. Հանգույցի լուծումը:

Այնուհետև լրացրին քառաբաժան մեթոդը.

Տեսա Լավ ու վատ արարքներ, կամակոր կերպար, զղջում սխալների համար, ուղղում	Լսեցի Բարի խոսքեր մայր և հայր արևներից, խրատներ
Զգացի Ամոթ փոքրիկ Արեգի փոխարեն, որ կամակոր լինելու պատճառով շատ մարդիկ են տուժում	Եզրակացրի Հեքիաթները լավն են, պետք է օրինակ վերցնել լավից և դառնալ օրինակելի:

Երեխաներն առանձնացրին շատ վատ բնավորության գծերը՝ խորամանկությունը, չարությունը, շողոքորթությունը, ծուլությունը, կամակորությունը, անբարոյականությունը: Եվ խոստացան, որ զերծ կմնան այս հատկություններից: Նրանք հասկացան, որ կան շատ լավ հատկություններ մարդկային բնավորության մեջ՝ ազնվությունը, բարությունը, անկեղծությունը, աշխատասիրությունը, հյուրասիրությունը, սխալը շտկելը:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	«Հեքիաթ արևի մասին » հեքիաթը ուսումնասիրելուց հետո երեխաները հասկացան, որ առանց արևի կյանք չի լինի: Մեր երկիր մոլորակի վրա Փոքրիկ Արեգի կամակորության պատճառով երկրագնդի վրայից անհետացան բոլոր ծառերը, ծաղիկները, մրգերը, բանջարեղենը, մարդիկ մնացին քաղցած, մրսեցին առանց արևի ջերմության, մթնում խարխափեցին առանց լույսի, կյանքը կանգ առավ: Հասկացան, որ ծնողներին, մեծերին, ուսուցչին չլսելը, կամակոր արարքները չարիք է բոլորի համար: Հասկացան, որ Արեգը զղջաց իր սխալի համար և ուղղվեց: Նրանք խոստացան, որ չեն կրկնի Արեգի սխալը: Այս հեքիաթի ընթերցման, ուսուցման ընթացքում ապահովվեցի ստեղծագործական փոխհամագործակցության մթնոլորտ: Խմբի բոլոր անդամների միջև ապահովվեց հանդուրժողական հաղորդակցություն: Աշխատանքի ընթացքում խմբի առջև դրված խնդիրները միասնաբար լուծելու անհրաժեշտության գիտակցում առաջացավ: Ձևավորվեց բարեկիրթ վարվելաձև: Հաշվի առնվեց աշակերտի ինքնուրույն կարծիքի, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքները: Ես՝ որպես ուսուցիչ հանդես եկա որպես՝ • Ղեկավար • Մասնակից • Խորհրդատու • Դիտող

	Այսպիսով գործնականում պարզ դարձավ, որ հեմիաթաթերապիան բարոյական խրատ է տալիս, որից երեխան կտահում է անմիջական բարոյական շեշտը: Այսպիսով, հեմիաթաթերապիան ճշտում, կոնկրետացնում է մարդկային բարոյական հատկանիշները, նպաստում լավագույն հատկանիշների արմատավորմանը: Զարգացնում է իրականության հանդեպ փաստերի ու երևույթների ճիշտ ընկալումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գ. Հ. Ղազարյան «Հեքիաթաթերապիա»:
2. Գ. Հ. Ղազարյան «Բազմաբնույթ մտածողության կիրառումը տարրական դասարաններում»:
3. Ք. Մանարյան «Փոքրերի հեքիաթը և մեծերի իրականությունը»:
4. https://www.youtube.com/watch?v=jQeg-wDTFHg

Հավելվածներ

Galaxy S23 Ultra
Galaxy S23 Ultra